


ԱՐԾԱԹ ԳՐԱՄ ԼԵՒՈՆ Գ

Վերջերս բախտն ունեցայ իմ հաւաքածոյիս վրան աւելցնելու Լեւոն Գ-ի (վերջինը Զրդ սեւ պելով) արծաթ դրամ մը, զոր բարեկամ մը բարութիւնն ունեցաւ ինծի նուիրելու:

Ինչպէս լուսանկարներէն կարելի է դատել արդէն, դրամը շատ լաւ պահպանուած է, եւ ունի կարգ մը յատկանշական կէտեր, զորս ի վեր հանել կ'արժէ:

Այդ դրամին ա կողման վրայ կ'երեւայ թա-



գաւորը, ձիւղարելով դէպ ի աջ, ունենալով իր դէմքին բարձրութեան վրայ, քիչ մը հեռու «Անիկ» մը. կոնակը՝ դաշտին մէջ ձիւղն գաւակին վերօքը՝ վեցրեւեակն աստղ մը. ու ձիւղն առջեւի ոտքերուն դիմաց, ծունկերուն բարձրութեան վրայ խաչ մը:

Այս կողման արծանագրութիւնն է.

ԼԵՒՈՆ ԹԱԳԱՌՈՐ ՀԱՅՈ

Բ կողման վրայ կ'երեւայ առիւծ մը, դէպ ի ձախ նայող, կոնակին ունենալով հորիզոնական միակ բեռով պարզ խաչ մը:

Այս կողման արծանագրութիւնն է.

ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍՍ.

Հակառակ անոր որ Հ. Սիպիլեանի գրքին մէջ յիշատակութիւնը չի կայ այս ձեւի և տիպի Լեւոն Գ-ի դրամի մը, հաստատապէս կարելի է պնդել թէ անիկա իսկապէս Լեւոն Գ-ի դրամն է, սա գերազանց պատճառով որ, ա կողման պատկերին մէջ գտնուող Ասող, Մահիկ ու Խաչ գործածուած են նաեւ իր երջանկայիշատակ հօր

Հեթում Ա-ի արծաթ երկղեզուեան դրամներուն մէջ ալ, և ուրիշ Հայ իշխանի դրամի մը վրայ. այդ նշանները, առանձին կամ ամբողջութեամբ տակաւին, գոնէ ես, չեմ տեսած:

Իմ հաւաքածոյիս մէջ ունիմ Հեթում Ա-ի երկղեզուեան դրամներէն երեք շատ լաւ պահպանուած օրինակ: Ա կողման վրայ, երեքն ալ կը կրեն խաչը՝ դաշտին վրայ: Մահիկը կ'երեւայ երկու օրինակին վրայ, դէմքին բարձրութեամբ (միշտ ա կողման վրայ). իսկ աստղ մը ու աստղաձեւ նշան մը դարձեալ երկու հատին ա կողման վրայ, ձիւղն լանջքին բարձրութեամբ:

Լեւոն Գ յաջորդելով հօրը, իր սպել տուած դրամներուն վրայ դրոշմել տուած է կարգ մը մասնայատուկ նշաններ, — նման իր հօրը դրամներուն, — պատիկ՝ բայց ակնառու տեղափոխութեամբ մը:

Մինչ Հեթում Ա-ի արծաթ դրամներուն վրայ խաչը միշտ դաշտին մէջ ու ձիւղն գաւակին վերօքն է, որդին՝ Լեւոն, գայն գաւակին վերօքն է, որդին՝ Լեւոն, գայն կը գետեղէ առջեւի կողմը, ձիւղն ծունկերուն բարձրութեամբը, հաւանօրէն տարբերութիւն մը դրամ ըլլալու համար:

Գանք հիմա ուրիշ կէտի մը:

Հ. Սիպիլեան իր «Գասաւորութիւն Ռուբլեան դրամաց» անուն գրքին մէջ, նոյն այս Լեւոն Գ-ի կը վերագրէ երկու տեսակ արծաթի դրամ, որոնք հետեւեալներն են:

Մէկ տեսակը, բ կողման առիւծը դէպ ի աջ դարձած, կոնակին վրայ կրելով հորիզոնական գոյգ բեռերով խաչ մը:

Միւս տեսակը, բ կողման առիւծը դէպ ի ձախ նայելով, դարձեալ կոնակին վրայ ունենալով հորիզոնական գոյգ բեռերով խաչ մը:

Իսկ երկուքին ալ ա կողման պատկերը նոյն է. թագաւորը որ կը ձիւղարել դէպ ի աջ. առանց ծանրանալու մէկ երկու անկարեւոր նշաններու վրայ, որոնք երկուքին մէջ տարբերութիւն մը կը դնեն:

Այս երկու ձեւի դրամները իրենց արծանագրութիւնով կը տարբերին իրարմէ սակայն, ու զգալապէս:

Առիւծը դէպ ի աջ դարձածը կը կրէ հետեւեալ արծանագրութիւնը.

Ա կողմ. ԼԵՒՈՆ ԹԱԳԱՌՈՐ ՀԱՅՈ

Բ » ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍՍ.

Առիւծը դէպ ի ձախ դարձածը՝ կը կրէ հետեւեալ արծանագրութիւնը.

Ա կողմ. ԼԵՒՈՆ ԹԱԳԱՌՈՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱ

Բ » ՇԻՆԵԱԼ Ի ՔԱՂԱՔՆ Ի ՍՍ.

Միջանկեալ ըսեմ որ այս արծանագրութեան մէջ նկատողութեան արժանի են «Լեւոն» գրելու ձեւը, ու ԱՄԵՆԱՅՆ բառին մէջ Է լատինական տառին ներկայութիւնը:

Ուրեմն, հիմակ ունինք երեք տիպի արծաթ դրամ, վերագրելի Լեւոն Գ-ի. (1270-1289):

Բայց այս երեք տիպն ալ իրարու չեն նմանիր, և տարբերութիւնները շատ ակնառու են,

անանկ որ գայնս նոյն իշխանին վերագրելու, յատկացնելու պահուն ակամայ պզտիկ վարանքի մը կ'ենթարկուի հաւաքածոյ կազմողը, և կամ դասաւորողը:

Առանց Հ. Սիպիլեանի հեղինակութիւնը կասկածի ենթարկելու յաւակնութիւնն ունենալու, ներելի է կարծեմ ինծի հաստատապէս յայտարարել թէ իմ նորոտաց դրամս է միայն զոր ակնխարակ կարելի է վերագրել Լեւոն Գ-ի:

Գալով այն միւս երկուքին, զորս քիչ վերը արդէն նկարագրեցի, կը մտածեմ որ կրկին քննութեան մը բովէն պէտք է անցնին հեղինակաւոր ու ձեռնհաս անձնաւորութեան մը կողմէ, դասաւորուելու համար իրենց ճիշտ տեղը, ըլլայ ան նոյն Լեւոն Գ-ի թէ՛ տարբեր Լեւոնի մը, և կամ նոյնիսկ տարբեր Լեւոններու:

Մ. ԵՐԵՅԵԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Խաղաղութիւն բարը թէ՛ և նշանակութեան մէջ ներգաշնակութեան հաւասար շատ անուշ կը հնէ, սակայն նշանակութեան մէջ կը կորսնցնէ իր շնորհքը: Լեզուի գաշնակութեան համար կը նախընտրեմ գործածել փոխան խաղաղութեան՝ հաշտութիւն բարը:

Այսպէս նաեւ անհայտ կը մնամ հանդիսութիւն բարին հետ, որ հին ատեն ընաւ չէ գործածուել, իսկ ներկայիս, մանաւանդ Պոստայ մամուլին մէջ սովորական եղած է: Վիեննայի Միլիթարիանները առաջ և այսօր շատ հաշտ մտային այդ բառին հետ իսկ Վիեննայի Միլիթարիանները թէ՛ անցեալին և թէ՛ ներկայիս այդ բառին հետ անհայտ մտայնած են. ուստի այս մամուլին մէջ ան երբեք մտաւ չէ ունեցած:

Կարծեմք մտանագրութեան մէջ հանդիսութիւն բարը ընաւ կարգացած չեմ, ասոր փոխարէն գործածուած է հակառակ բարը, որուն նշանակութիւնն է սօցիալիզմը, միաբանական ցեղաբարձ (բար Հայկ. բարարանի):

Ասով հանդերձ հարկ է որ խոստովանեմ թէ Վիեննայի Միլիթարիաններէն Հ. Արսէն Բագրատունիի հայկարան ուսուցիչը՝ Հ. Եղիա թոմասեան գայն գործածած է, ըսելով «Խիստ փառաւոր հանդիսութեանց մէջ ալ...»: Տես «Իմաստութիւն մարդկային», էջ 185:

Լաւ չէ՞ որ նախնեաց հետեւելով՝ մենք ալ «հանդիսութիւն» բառին տեղ «հանդիս» գործածենք:

Կոյնայ կ'ըսէ. «Աշխարհս դիմակ մըն է. դէմք, հազուատ, ձայն, և ամէն բան խաբէրայութիւն է: Ամէն մարդ կ'ուզէ երեւնալ այնպէս, ինչ որ չէ: Ամէն մարդ կը խաբուի. և ոչ մէկը կ'անգրադառնայ»: Եւ կան քննադատներ, որ այս ճշմարտութեան կ'ընդդէմանան, և կ'ըսեն որ անցեալին համար յատուկ է այդ. ներկայ սերունդը արդուեան աչքով կը տեսնէ ու կը դատէ. և ընաւ դիմակի պէտք չունի Հին և նոր ըմբռնումներու միջեւ շատ տարածայնութիւն կայ. աւելն պարագային հարկ է որ թէ՛ հինը թէ՛ նորը գանապարհային վարդը մոլախիչեղն և ծաղիկն ու խոտը միասին մէկ խորձ ընկելով դժուրը չենան:

Կորեբէն ո՞վ պիտի ապրի իր ժողովրդական համակրելի անունովը... ապագան Արամազդին ծունկերուն վրայ կը մնայ: Առ այժմ մտնալու չենք որ անցեալին ու ներկային մէջ, եղած են, ու կ'ապրին սակաւին, կեղծ մտաւորականներ, կեղծ բանասէրներ, կեղծ բանաստեղծներ, կեղծ արուեստագէտներ, կեղծ պատմաբաններ, կեղծ դրագէտներ, ամէն ճիւղերու մէջ ունեցած ենք և ունինք տղէտ դիտումներ:

Կարելի թէնէն չհասկնողը դրած է նկարներուն վրայ, դերասանութիւն չընողը՝ դրած է հայ դերասաններու պատմութիւնը. ճարտարապետ չեղողը դրած է հայ ճարտարապետութեան վրայ. յունարէն ու պարսկերէն չգիտողը ուսումնասիրած ու քննադատած է հելլէն ու պարսիկ դասականները:

Հ. Ս. Ե.

